ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ դոցենտ, բան. գիտ. թեկն.
susannagrigoryan@ysu.am

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հովհաննես Դրասխանակերտցի, խոսքի արտահայտչականություն, ածանց, բառապաշար, իմաստային, լեզվական կառուցվածք, նորակազմություններ, հարադրական, համադրական:

Ключевые слова и выражения: Ованес Драсханакертци, выразительность речи, суффикс, лексика, смысловой, языковая структура, неологизмы, аналитический, синтетический.

Key words and expressions: Hovhannes Draskhanakertci, expressiveness of speech, affix, vocabulary, semantic, linguistic structure, neologisms, analytical, closed /synthetic.

Սույն հոդվածի քննության նյութը Հ. կաթողիկոս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի նորակազմություններն են՝ իրենց բառաիմաստային և բառակազմական իրողությունների հաշվառումով, որը խիստ արդիական է պատմական բառագիտության և հայոց լեզվի պատմության հետագա զարգացման համար:

Հ. Դրասխանակերտցին կաթողիկոս է դարձել Մաշտոց կաթողիկոսի մահից հետո՝ 897 թվականին, և որպես հոգևոր բարձր պաշտոնյա՝ ականատեսն ու անմիջական մասնակիցն է եղել բազմաթիվ քաղաքական իրադարձությունների: Քաջ գիտակցելով կենտրոնական միասնական քաղաքական իշխանության գոյությունը Հայաստանում՝ եռանդուն աշխատանք է կատարել այդ ուղղությամբ: Դրասխանակերտցու վարած բանակցությունները բյուզանդական կայսեր հետ ընդդեմ արաբների հայ գրականության մեջ համարվում է միջնադարի հայ դիվանագիտության նրբամտության մի արտահայտություն[1]: Նա մահացել է 920- 930-ական թվականներին:

[1] Տե՛ս Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Եր., 1959, էջ 461:

Հովհաննես Դրասխանակերտցին 10-րդ դարի պատմագիր է, և նրա մասին որոշ կենսագրական տեղեկություններ իմանում ենք հենց իր միջոցով: Հ. Դրասխանակերտցու պատմությունն առաջին անգամ տպագրվել է Երուսաղեմում 1843 թվականին, իսկ երկրորդ անգամ՝ 1955-ին Մոսկվայում՝ Մկրտիչ Էմինի կողմից, երրորդ անգամ՝ 1912 թվականին: «Պատմութիւն Հայոց» գիրքը թարգմանվել է նաև ֆրանսերեն: Դրասխանակերտցու պատմությունն ընդգրկում է 10-րդ դարի արաբական տիրապետության օրոք Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները: Պատմությունը բաղկացած է երեք մասից՝ առաջաբանից, բուն նյութից և վերջաբանից: Այն գրված է զգացմունքով, գեղեցիկ և ազդու՝ աշխատելով ընթերցողի մեջ ատելություն արթնացնել դեպի թշնամին՝ իսմայելացիները:

Ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի բազմաթիվ հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ Հովհաննես Դրասխանակերտցին «Պատմութիւն Հայոց» երկում ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ հարստացնելով թե՛ իր ստեղծագործության, թե՛ մեր լեզվի բառային կազմը:

Հ. Դրասխանակերտցու երկի բառապաշարը պատկերավոր է, հարուստ բազմիմաստ բառերով և դարձվածային արտահայտություններով, հոմանիշներով, յուրօրինակ մակդիրներով ու փոխաբերություններով: Նա օգտագործել է հետդասական գրաբարի բառաստեղծման հզոր ներուժը նոր բառերի կազմության համար, թեև, իհարկե, երբեմն ստեղծել է նաև նորակազմ բարդ և ածանցավոր արհեստական բառեր, որոնց իմաստային բովանդակության բացահայտումը դժվարություններ է առաջացնում: Առանձնացնելով նորահայտ բառերը և հնարավորինս բացահայտելով դրանց իմաստային բովանդակությունը՝ մենք վերլուծել ենք դրանք ըստ բառակազմության և խոսքիմասային պատկանելության:

Հ. Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկի մեջ տեղ գտած նորակազմությունները բաժանել ենք երկու խմբի՝ ա) նորահայտ բառեր, որոնք վկայված չեն գրաբարյան բառարաններում, բ) նորակազմ բառեր, որոնք այդ բառարաններում կամ դրանցից որևէ մեկում արձանագրված են որպես մեր քննության առարկա երկում հեղինակի կողմից առաջին անգամ գործածված:

Հ. Դրասխանակերտցու կողմից առաջին անգամ գործածված և մեր կողմից դուրս գրված 300 –ից ավելի բառեր արձանագրված են ՆՀԲ-ում՝ *դժուարաժայռ* (292), *երագագիր* (5), *ձորադաշտակ* (15), *մարգարէաբարբառ* (235), *մարգարտատող* (197), *ոսկեփունջ* (102) և այլն, 23 նորակազմ բառ՝ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»՝ *անդերանութիւն* (254),

ապիդատ (147), *գաղտնական* (276), *դանդաղելի* (363), *դարափլակ* (163), *ելուզակաւրէն* (299), *երերածուփ* (255), *զուրաքսութիւն* (32), *զրաւումն* (8), *թէռնական* (101), *խոտորիչ* (338), *մարգարէաբարբառ* (235), *կանտոցահար* (22), *հեղգապաշաւ* (366), *հիւրամեծասիրութիւն* (285), *ճառագայթաւէտել* (352), *պատուասիրելի* (4), *ցեղապատմութիւն* (5), *ցոլութիւն* (364), *քաջանձնեայ* (135), 5 բառ՝ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանում»՝ *ելուզակաւրէն* (299), *զօրափառ* (284), *խարազանազգեաց* (104), *հրաշապէս* (74), *պիտելի* (238), երկու բառ՝ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում» բառարանում՝ *տեսակարարութիւն* (100), *քաջանձնեայ* (61):

Հովհ. Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկում տեղ են գտել առավելապես մեզ հետաքրքրող և որևէ բառարանում չարտացոլված երկու տասնյակ նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Առձեռն բառարանի, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ի, Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր», Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում» բառարանների[2]:

Նախ և առաջ հարկ ենք համարում ներկայացնել դրանք բնագրային օրինակներով.

1. **Անպարադիր** –անպարփակելի: ...զանճառելի եւ *զանպարադիր* Երրորդութեանն հոգեզուարճ բղխումն յինքն ճառագայթափայլեալ՝ զբոլոր Արամեանս ազն բուժեաց յախտից (39):
2. **Առաջիանկումն** –ապաշխարություն, ապաշխարանք: ...ապաշխարութեամբ եւ *առաջիանկմամբ* պատառեցի նովին սուրբ ձեռօք զձեռնադրեալսն (150):
3. **Բարձրաբերն**-բարձրաբերձ: ...որ եւ *զբարձրաբերն* տիրելն հիւսիսականաց ազգացն...(167):
4. **Գաղտագնացութիւն**-գաղտնի հեռանալը: *Գաղտագնացութեամբ* առեալ տանել անդրէն (112):
5. **Դասնաւոր**- կարգավոր: ...զկնի սորա համանուն սորուն Տրդատ ի *դասնաւորից* կացորդի յաթոռ հայրապետութեան (105):

---

[2] Տե՛ս Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, 1836-1837(այսուհետև՝ ՆՀԲ), Աւգերեան Մ., Ճէլալեան Գր., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865 (այսուհետև՝ ԱԲ), Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, «Նորայայտ բառեր գրաբարում», Եր., 2007, Հովհաննիսյան Լ., Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010:

6. **Եղիական** – Եղիային վերաբերող: ...*զԵղիական* պատերազմ յարդարէր ընդդէմ հակառակամարտիցն (243):
7. **Երկսաւոր**- հավանաբար նշանակում է «երկու հազար»: ...ընտրեալ արս իմն *երկսաւորս*...իբրեւ երկու հազար (114):
8. **Երուսաղէմացի**- Երուսաղեմում ապրող, ծնված: *Երուսաղէմացիք* զքրիստոսընկալ սուրբ խաչն վաղվաղակի յուղարկէին նաւօք ի Կոստանդնուպօլիս (82):
9. **Յոխորիմաց** – խորիմաստ: ...կարծիս իմն ընդունի սիրտ իմ ի հակառակադիր եւ *յոխորիմաց* այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ(79):
10. **Ընդհասարակ**- առհասարակ: ...նայել ի սէր ի միաբանութիւն եւ ի հաշտ խաղաղութիւն ընդ միմեանս եւ *ընդհասարակ* իշխանս Հայոց եւ Աղուանից (268):
11. **Խողական**- անհայտ բառ: ...ի գարշապարաց պղծոց եւ ի *խողական* երկրապիշ անցաւորաց ճանապարհի...(222):
12. **Յետսկոյս**- հետնակողմ: ...*յետսկոյս* առ ի նմանէն մղեալ անցեալ զանցեալ եւ թիկունս դարձուցեալ էին (321):
13. **Ներսուաղեալ**- մաքրել, ջնջել: ...հեղեղեալ, ողողեալ, *ներսուաղեալ* ջնջեաց Տէր (9):
14. **Շփոթութիւն**-շփոթմունք: ..սամարտութիւն *շփոթութեամբ* զմիմեամբք ելեալ....(23):
15. **Ուտեացի**- Ուտիքի բնակիչ: ...զօրքն *ուտէացի* անդառնալի գնային (219):
16. **Չքնաղատեսակ**-խիստ գեղեցիկ: ...արկաւ իբրեւ զօթոց զբարեվայելուչ եւ *զչքնաղատեսակ* դիտական Աշոտոյ (192):
17. **Պարագահութիւն**- ...ըստ վստահելոցն *պարագահութեանց* ի պաշտօն աստուածայնոյ փառացն (366):
18. **Սպասելար-** անստույգ բառ- ...հանդերձ *սպասելար* եւ պայազատ գնդիւն՝ զբազումս ի հազարացուցն թաւալգլոր խաղացուցանէին(245):
19. **Ստուգահաւատ** – ուղիղ հավատք ունեցող: Սա հպարտացեալ ....*ստուգահաւատ* ազգաց՝ լնոյր ապա զիւր կորստական խորխորատն խորհրդոց (81):

Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները նույնն են՝ բառաբարդում և ածանցում՝ իրենց բազմազան արտահայտություններով: Նույնն են նաև գործառական ավելի մեծ հաճախականություն դրսևորող կենսունակ բառակազմական կաղապարները՝ ածանցավոր բառերն ու հոդակապով բարդությունները, իսկ գործածության տեսակետից

Դրասխանակերտցու հեղինակային նորակազմությունները հիմնականում ածական որոշիչներ են:

Ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ նոր բարդ բառերի կառուցվածքային կաղապարներում գործող ընդհանուր օրինաչափությունն այն է, որ առաջին հերթին ակտիվություն է դրսևորում գոյականը: Բաղադրյալ բառերի մեծ մասը կազմված է կենսունակ բառակազմական կաղապարներով, որոնցում, ինչպես նշվեց, հաճախված են հոդակապով բարդությունները: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Հ. Դրասխանակերտցու բառապաշարին ամենից ավելի բնորոշ է գոյական + գոյական կաղապարը, որի շնորհիվ ստեղծվում են ածականներ գերազանցապես ոճական նպատակով և խոսքում դառնում մակդիրներ:

ա) **Գոյական+գոյական՝** *արջառաջիլ* (249), *բծամիտ* (148), *գրագիծ* (9), *գառնահամբոյր* (229), *դիակոյտ* (162), *լուսաշաւիղ* (283), *ծովամարտիկ* (356), *հոգենիւթ* (182), *ձորադաշտակ* (15), *մարգարէաբարբառ* (235), *պարտավճար* (140), *սպայակոյտ* (316), *տիեզերասահման* (282), *տիեզերաքարոզ* (282), *տղայադիտակ* (76), *փայտայարկ* (75), *քրիստոսադրոշմ* (51), *քրիստոսակարգ* (43), *քրիստոսակրաւն* (229) և այլն:

բ) **Ածական+գոյական՝** *առաքելանուէր (83), արգոյակապ* (4), *բազմապատիւ* (43), *բարեձիր* (198), *դիւրագորով* (329), *դժուարաժայռ* (292), *երագագիր* (5), *լիահանճար* (19), *խոհեմամիտ* (21), *խոշորաճաշակ* (287), *մոլենախանձ* (157), *չարակեղտ* (25), *չարայաչաղ* (147), *ստահամբաւ* (97), *ստուգահաւատ* (81), *փարթամաշնորհ* (215):

գ)**Գոյական+ածական՝** *անձաւախիտ* (230), *դիւախրոխտ* (334), *դիւամոլար* (364), *դիտակավայելուչ* (121), *իշխանապանծ* (177), *ձիախրոխտ* (43), *մտահաճ* (4), *ջլաձիգ* (175), *օգտածարաւ* (329):

դ)**Ածական+ածական՝** *առաքինազօր* (273), *առաքինահրաշ* (349), *բազմաբաղձ* (70), *հարթայարմար* (204), *մոլենախանձ* (157), *չարախտավատ* (227), *մշտնջենազուարճ* (41), *յորդաբորբ* (246), *չարավավաշ* (274):

ե) **Գոյական+բայ՝** *աշխարհակեր* (264), *աչախիլ* (164), *աւազախիր* (88), *գահամեծար* (182), *գիշամուխ* (264), *լծադիր* (22), *խարազնազգեաց* (104), *կաւափաղաղ* (220), *կուրապաղատ* (268), *հոգիախաղաց* (148), *կանանցախօս* (229), *կաւափաղաղ* (220), *հողահեղձոյց* (162), *ձեռաձիր* (324), *ոգեպահ* (49), *պտղատածող* (199), *ջրապատ* (229), *տիեզերաբնակ* (272), *ցաւակիր* (340), *փայլակնահար* (59):

զ) **Ածական+բայ՝** *առաքինազարդ* (55), *բազմայորդոր* (260), *բազմապաղատ* (296), *բարձրաբեռն* (167), *դժուարամուտ* (286), *լիապատար* (142), *ճոխապաճոյճ* (252), *մաքրամատոյց* (366), *մեղկաշօշափ* (189), *չարախտավար* (346), *չորաբեկ* (154), *պայծառակերտ* (72), *պերճապաճոյճ* (31), *ստուգագէտ* (72), *ուղղակարծ* (185):

է) **Թվական + գոյական՝** *միախորհուրդ* (297):
ը) **Մակբայ+բայ՝** *մշտամռունչ* (287):
թ) **Բայ +բայ՝** *յոգնածախող* (223), *պարտոխաթափ* (115):

Հ. Դրասխանակերտցու կերտած հոդակապավոր բարդությունների մեջ կան նաև այնպիսիք, որոնք ստեղծվել են բարդ բառի բաղադրիչների տեղափոխությամբ, ինչպես *դաւադրժող* (177)- *դրժադաւ* (176), *վայելչադիտակ* (245)- *դիտակավայելուչ* (121):

Նորաստեղծ բառերում գործածության որոշ հաճախականությամբ առանձնանում են նաև անհոդակապ բարդությունները, ինչպես՝ *առաջիանկումն* (150), *բազմաշխատ* (76), *բանսուտ* (150), *գառնաշխատ* (130), *դժոխբմբերելի* (237), *խեցբեկոր* (54), *հանճարիմաստ* (328), *մահառիթ* (220), *յետկար* (105), *յոխորիմաց* (79), *չարաղանդ* (338), *վաղընդփոյթ* (200):

Ածանցման հիմնակաղապարն իրենից ներկայացնում է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի՝ ածանցի բաղադրություն, իսկ ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրված դիրքի՝ դրանք բաժանվում են նախածանցավոր և վերջածանցավոր կաղապարների, որոնցից վերջինները մշտապես գերակշռում են: Ածանցավոր բառերի սերող հիմքերը կարող են լինել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ կազմություններ, ըստ որի էլ առաջանում են նախածանցների և վերջածանցների, ինչպես նաև տարբեր ձևավորում ունեցող հիմքերի ու ածանցների զուգորդություններ: Մենք ածանցմամբ ստեղծված նորակազմ բառերը առանձնացրել ենք՝ ա) ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրված դիրքի՝ նախածանցավոր և վերջածանցավոր կաղապարներ, բ) ըստ սերող հիմքի կազմության, գ) ըստ ածանցների՝ նորակազմ բառեր կերտելու ակտիվության: Նախածանցավոր կաղապարներում Հովի. Դրասխանակերտցու երկում հաճախադեպ է **ան-** նախածանցը՝ ***ան***գառազեղ(344), ***ան***կարեկիր (162), ***ան***պարադիր (39), ***ան-***պողոտայ (175), ***ան***ռամիկ (330), ***ան***փոշիշ (112): Մեկ-երկու նորակազմ բառեր կան հետևյալ նախածանցներով՝ ***ընդ*** ՝ ***ընդ***հասարակ(268), ***ենթ***՝ ***ենթ***ամարդ(297), **համ՝** ***համա***զուն (213), ***համա***խումբ (181), ***վեր***՝ ***վերա***կարդալ (267):

Սերող հիմք + վերջածանց կաղապարով նոր բառերի ավելի մեծ քանակը, անշուշտ, բխում է հայերենի բառակերտման առանձնահատկություններից, որտեղ վերջածանցումն ավելի կենսունակ է: Հովի. Դրասխանակերտցու բառապաշարում զգալիորեն արդյունավետ են արմատ+վերջածանց, արմատ+վերջածանցավոր բառ մասնակաղապարները՝ հետևյալ վերջածանցներով՝ -***բար***՝ պաճուճ***արար*** (198), պանդխտ***արար*** (265), պտուտ***արար*** (220), վրիժ***արար*** (165), -***արդ***՝ վիմ***արդ*** (91), -***գար***՝ լեզու***ագար*** (185), զայրագն***արար*** (246), -***ակ***՝ լեռն***ակ*** (311), պահն***ակ*** (71), ուժեղ***ակ*** (242), -***ական***՝ գաղտնական (276), Եղի***ական*** (243), թէոն***ական*** (101),

խրախճան***ական*** (110), խող***ական*** (222), հիւղ***ական*** (246), նանր***ական*** (172), սպարապետ***ական*** (194), սրովբէ***ական*** (365), տրոփ***ական*** (191), փարիս***ական*** (155), օրհաս***ական*** (172), -***ային***՝ տունջենային (364), -***անք***՝ դաւ***անք*** (338), ձաղկ***անք*** (205), -***աւոր***՝ դասն***աւոր*** (105), -***ացի***՝ երուսաղեմ***ացի*** (82), ուտե***ացի*** (219), -***եալ***՝ պատմուճան***եալ*** (176), -***եայ***՝ քաջանձն***եայ*** (61), -***ելի***՝ դանդաղ***ելի*** (363), -***էան***՝ իսմայել***էան*** (87), -***իչ***՝ տոչոր***իչ*** (231), -***ոտ***՝ շուայտ***ոտ*** (19), -***պէս***՝ հարստ***ապէս*** (14), *նանրապէս* (365), -***ումն***՝ վտարանդ***ումն*** (279), -***ութիւն***՝ *շողոմ**ութիւն*** (288), պատրիարգ***ութիւն*** (52), -***ուտ***՝ *ելուզակ**ուտ*** (140), ***օրէն***՝ *ելուզակ**աւրէն*** (299):

Բանաստեղծը հետաքրքիր, գեղեցիկ նորակազմություններ է ստեղծել նաև բայական ածանցներով. բայերի կերտումը այլ խոսքի մասերից տեղի է ունենում պարզապես բայական վերջավորության կցումով կամ -**անալ** բաղադրյալ բայակերտ ածանցով[3]՝ խրախամտ***ել*** (164), պարառոց+***ել*** (196), պիտառոց+***ել*** (143), սրատես***ել*** (151), վարսաւոր+***ել*** (258), վերելակ+***ել*** (335), վերշարժ***ել*** (366), տարաբնակ+***ել*** (80), տրեխաւոր+***ել*** (190), ուրոյն***անալ*** (303):

Կան նաև համածանցավոր նորակազմություններ՝ ***ան***աւազ***եալ*** (111), ***ան***ձեռ***ոց***, ***ան***սուաղաց***եալ*** (238), ***ան***սուաղ***ութիւն*** (122), ***ան***տարր***ապէս*** (193), ***ապ***աշխար***հական*** (232), ***առ***ած***ութիւն*** (252), ***արտա***խուր***ակեմ*** (199), ***բաղա***ձայն***ութիւն*** (363), ***առ***կայթ***եալ*** (276), ***բաց***ածան***օթանամ*** (360), ***բաց***երեւ***ակի*** (335), ***համա***պատու***եալ*** (324), ***յարա***բարդ***եալ*** (239), ***յարա***կց***արար*** (17), ***վեր+ըն/դ***/կալ***ուչ*** (171), մեկից ավելի վերջածանց ունեցող բառեր՝ գեր(ի)չ +**ութիւն** (211), դաւ+***ող***+***ական*** (185), դաւ+***ող + ութիւն*** (97), ել+***ու/յ/զ+ակ***+***ուտ*** (140), լք+***ու/յ/ց+ումն*** (246)), խարդաւ+***ան+***/**ք**/ +***ական*** (223) խոհ+***ական***+***արար*** (100), պարտ+***ապան***+***արար*** (217), պարտ***ապան***+***ութիւն*** (275), պտող***եղ*** +***ութիւն*** (260), սեպհ+***ական+արար*** (113), ուժ***եղ***+***ակ***+***արար***(15), ուժ+***եղ***+***ական***+***ութիւն*** (320), փախ+/***ու/ստ***+***է/եայ***/+***ութիւն*** (218):

Կան նաև զանազան բարդածանցավոր բառեր՝ ***անդերանութիւն*** (254), ***աջողաձեռնարար*** (114), ***առաջիանկումն*** (150), ***առձեռնապատրաստ*** (333), ***բազմահարկի*** (104), ***բարեպաշտիկ*** (280), ***բարեպաշտունի*** (241), ***գահակարգեալ*** (57), ***գաղտագնացութիւն*** (112), ***գաղտակծութիւն*** (218), ***դարափլակ*** (163), ***երկնասահան*** (364), ***երկնացեղիկ*** (271), ***երկրահոսան*** (364), ***ըղձակերտութիւն*** (43), ***ընդդիմակռուել*** (278), ***թագրն(դ)կալութիւն*** (20), ***կուրապաղատութիւն*** (268), ***հնձանահարութիւն*** (163), ***հրապաշտութիւն*** (59), ***համբարածու*** (26), ***ձեռներիցութիւն*** (116), ***ճշմարտասիրարար*** *(62)*, ***մահաբերեալ*** (227), ***մշտնջենարարոյ*** (27), ***շղուրտարարոյ*** (25), ***չարակնարար*** *(308)*, ***չարիմացութիւն*** (329), ***չափչգիտութիւն*** (149),

[3] Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 300:

պատրաստաբնակութիւն (274), ***սպասահարկութիւն*** (209), ***սրազինեալ*** (273), ***տեսակարարութիւն*** (100), ***սրբամտութիւն*** (273), ***տնանկանոց*** (46), ***տնկակոտորութիւն*** (160), ***փայլակնաբար*** (224), ***փաստաբանութիւն*** (32), ***փսաղտութիւն*** (110), ***օրինաբանականք*** (365):

Հետաքրքիր են պատմիչի ստեղծած նորակազմ բայական հարադրությունները՝ ***անիծակուր առնել*** (45), ***գրաւաթափ լինել*** (242), ***զրաւամահ լինել*** (228), ***կոշկոռմամահ լինել*** (353), ***հրդեհակէզ լինել*** (339), ***ձեռնատուր լինել*** (100), ***ձեռնթափ լինել*** (230), ***յորդաչու լինել*** (327), ***ջանահնար լինել*** (295), ***տապախարշ առնել*** (85):

Այսպիսով, Հ. Դրասխանակերտցին իր «Պատմութիւն Հայոց» երկում հայերենի բառագանձը փորձել է համալրել ու հարստացնել նոր ու գեղեցիկ կազմություններով, որոնք հարստացրել են մեր լեզուն, և նրանցից շատերը այսօր էլ արդիական են և գործածելի:

Ս. Գրիգորյան

Նորակազմությունները Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկում

Ամփոփում

Սույն հոդվածը նվիրված է Հովհ. Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» երկում տեղ գտած նոր բառերի քննությանը, որոնք բաժանել ենք երկու խմբի՝ ա) նորահայտ բառեր, որոնք առաջին անգամ գործածել է հեղինակը, բ) նորակազմ բառեր, որոնք արձանագրված չեն գրաբարյան հայտնի բառարաններում:

Հեղինակը վարպետորեն օգտագործել է մեր լեզվի հարուստ բառապաշարը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, դիմել է հայերենի բառակազմական օրինաչափություններին՝ ստեղծելով նոր բառեր՝ դրանով իսկ հարստացնելով ոչ միայն իր ստեղծագործությունների, այլև մեր լեզվի բառային կազմը: Սակավաթիվ են նախածանցավոր-վերջածանցավոր նորակազմությունները, որոնք հիմնականում բարեհունչ են և կազմված են հայերենի բառակազմական օրենքներին և օրինաչափություններին համապատասխան:

С. Григорян

Неологизмы в книге Ованеса Драсханакертци "История Армении".

Резюме

Представляемая статья посвящена изучению неологизмов в книге "История Армении" Ованеса Драсханакертци, которые делятся на два типа- новые слова, которые первый раз использовал автор, и неологизмы, которые не имеются в больщих толковых словарях древнеармянского языка. Автор мастерски использовал весь богатый лексический состав нашего языка, а также, по мере необходимости, словообразовательные возможности армянского языка, создавая новые слова, обогащая самым язык собственныõ произведений и состав литературного языка. Очень немногочисленны прификсально – суффиксальные неологизмы, которые в основном, благозвучны и образованы соответственно законам и законамерностям словообразовательной традиции армянского языка.

S. Grigoryan

Neologisms in the Work “The History of Armenia” by Hovhannes Draskhanakertsi

Summary

The given article is devoted to the examination of the new words in the work “The History of Armenia” by Hovhannes Draskhanakertsi. We have divided the mentioned words into two main groups; a) newly found words which were used by the author for the first time, b) newly coined words which are not registered in the famous and most used dictionaries of Old Armenian.

The author masterly used the rich vocabulary of our language as well as he made use of the word-formation regularities of Armenian, in this way enriching not only the language of his works, but also the word-stock of our language. Those prefixosuffixal words, which are euphonious, are not numerous in our language and are formed according to the rules and regulations of Armenian.

Խմբագրություն է ուղարկվել 03.09.19
Հանձնարարվել է գրախոսության 10.09.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19